Հաստատում եմ

Տնօրեն-----Չ.Կարապետյան

<< 01 >> 09 ----------2023թ.

Դասղեկի աշխատանքային տարեկան

Ծրագիր

Արմավիրի մարզի <<Արազափի Թ. Հուրյանի

. անվան միջն. դպրոց >> ՊՈԱԿ

2023 -2024 ուստարի

12-րդ դասարան

Դասղեկ. Հ. Սարիբեկյան

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -12-րդ դասարանում սովորում են 9 աշակերտներ, 3 աղջիկ և 6 տղա, որոնցից մեկը ներառական կրթությամբ ուսուցանվող աշակերտ է: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Գերազանց սովորող աշակերտ չունենք, ունենք 3 հարվածային : Աշակերտները կարևորում են գիտելիքները գնահատում գեղեցիկն ու բարին: Դասարանում տարաձայնություններ չկան, համախմբված են, ցանկացած իրավիճակում պատրաստ են օգնել միմյանց:

ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հետևել աշակերտների առաջադիմությանը, կարգապահությանը:

Ձեռնարկել միջոցներ ,որպեսզի դասարանում չծագեն կոնֆլիկտներ:

Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ:

Անցկացնել դասալսումներ,կազմակերպել էքսկուրսիաներ:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Էլեկտրոնային մատյանում նշել բացակայությունները:

Հետևել կարգապահությանը:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Անցկացնել դասղեկի ժամեր:

Կատարել այլ պլանավորված աշխատանքներ:

ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցների միջոցով բացատրել տարբեր աղանդների բացասական ազդեցությունը մարդու հոգևոր աշխարհի վրա: Սովորեցնել բոլոր իրավիճակներում զերծ մնալ բացասական երևույթներից:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթնացնել սեր դեպի բնությունը, հայրենիքը, հարգանք դեպի մեծերը: Սովորեցնել կատարել բարի գործեր, օգնել կարիքավորներին, լինել ուշադիր բոլորի հանդեպ: Բացառել անտարբերությունը, ունենալ առանձնահատուկ դրսևորում գեղեցիկի նկատմամբ, արժևորել այն:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսել հայ հերոսների սխրանքների մասին: Ներկայացնել այն հերոսներին ովքեր զոհվել են արիաբար հանուն հայրենիքի:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցների միջոցով հասանելի դարձնել ֆիզիկական կուլտուրայի դերը և նշանակությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնել աշակերտներին տարբեր մասնագիտությունների կարևորությունը: Արթնացնել սեր աշխատանքի նկատմամբ;Մեծ ակտիվություն ցուցաբերել շաբաթօրյակներին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարևորել շրջակա միջավայրի պահպանության խնդիրը:Մասնակից դարձնել բնապահպանական միջոցառումներին, հոգալ շրջակա միջավայրի մասին:

ԴՊՐՈՑ ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կարևորել դպրոց ընտանիք կապը:Ծնողների և ծնող կոմիտեի հետ ստեղծել սերտ կապ հաղթահարելու բոլոր դժվարությունները:

ՈՒՍՈՒՄՆԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐԸ	ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	ԿԱՏԱՐՈՂ
1	2023-2024 ուս տարվա անելիքների քննարկում	դասղեկ
2	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում է մեր կյանքը	դասղեկ
3	Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի	դասղեկ, զինղեկ
4	Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք	Դասղեկ, պատմ. Ուսուցչ.
5	ՈՒսուցչի դերն իմ կյանքում	դասղեկ
6	Ինչ է սերն ու նվիրվածությունը	դասղեկ
7	Եկ հասկանանք իրար, ինքնատիրապետման	դասղեկ

	անհրաժեշտությունը	
8	Վատ սովորույթներ, ինչպես պայքարել դրանց դեմ	դասղեկ
9	Ինչ դառնալ կյանքում	դասղեկ
10	Կարող եմ օգտակար լինել	դասղեկ
11	Գնահատիր ինքդ քեզ	դասղեկ
12	Զրույց Ապահով համացանց	դասղեկ
13	Ես պատասխանատու եմ իմ արարքների համար	դասղեկ
14	Նախապատրաստվել դիմակահանդեսի	դասղեկ
15	Կազմակերպչական հարցեր	դասղեկ
16	Ինչպես դիմավորեցի ամանորը	դասղեկ
17	Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող	դասղեկ
18	Մտքերի փոխանակում – Կարողանում եմ արդյոք սիրել	դասղեկ
19	Տյառընդառաջ տոնի խորհուրդը	Դասղեկ, եկ. Պատմ. Ուսուցչ.
20	Ինչ յուրահատուկ ընդունակություններ ես բացահայտել քո մեջ այս տարի	դասղեկ
21	Ինչ է երրջանկությունը	դասղեկ
22	Մասնագիտություններ որ հետաքրքրում են ինձ	դասղեկ
23	Արդյոք բարձրագույն	դասղեկ

	հաստատություն ավարտելը միշտ է բավարար կրթված լինելու համար	
24	Ինչ եք սովորել դպրոցից, նշեք 3 ամենից կարևոր կետերը	դասղեկ
25	Ինչպես եմ ինձ պատկերացնում դպրոցն ավարտելուց հետո	դասղեկ
26	Ինչպես եք պատկերացնում ձեր վերջին զանգը	դասղեկ
27	Ժպիտը մարդու կյանքում	դասղեկ
28	Շրջակա միջավայրը և դրա պահպանման կարևորությունը	դասղեկ
29	Իմ կատարած լավ գործերը	դասղեկ
30	Ինչպես հասնել հաջողության	դասղեկ
31	Ամենահետաքրքիր դասն այս ուսումնական տարում	դասղեկ
32	Վերջին զանգ խորագրով ցերեկույթի կազմակերպում	դասղեկ
33	Կազմակերպչական հարցեր	դասղեկ
34	Վերջին դաս	դասղեկ

1.

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1.Նոր ուսումնական տարվա անելիքների ծրագրում

2.Ընթացիկ հարցերի քննարկում

3.Կիսամյակում կատարված աշխատանքների վերլուծություն

4.Կազմակերպչական հարցեր

5. Էքսկուրսիայի կազմակերպում որևէ պատմամշակութային վայր:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԹԵՄԱՆՆԵՐ

1. 12րդ դասարանի ծնողական խորհրդի կազմի վերընտրություն

2023-2024 ուստարվա անելիքների քննարկում

2. ՈՒշադրություն դարձնել աշակերտների վարքագծին և ուսման առաջադիմությանը
3. Կիսամյակում կատարված աշխատանքների վերլուծություն
4. Ծանոթացում քննակարգին
5. Վերջին զանգի նախապատրաստական աշխատանքների քննարկում